

Կարծիք

Լևոն Գազիկի Ալոյանի

«Հայաստանի Հանրապետության դատական իշխանության զարգացման
հեռանկարները դատաիրավական բարեփոխումների համատեքստում. տեսական-
իրավական վերլուծություն» թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Ներկայացրած թեկնածուական ատենախոսությունը նվիրված է ՀՀ դատական իշխանության կատարելագործման և զարգացման հեռանկարների ուսումնասիրությանը դատաիրավական բարեփոխումների համատեքստում:

Գրախոսվող հետազոտության արդիականությունը պայմանավորված է ՀՀ-ում անկախ դատական իշխանության համակարգի կայացման առջև ծառացած խնդիրներին տեսականորեն հիմնավորված առաջարկությունների մշակմամբ: Այս գերխնդրի լուծման համար բացի պետական անհրաժեշտ միջոցառումներից, անհրաժեշտ է նաև գիտականորեն հիմնավորված հետազոտությունների իրականացում:

Մույն նպատակին է ուղղված նաև խնդրո աշխատանքը: Այս առումով, գտնում ենք, որ թեմայի վերաբերյալ առկա հետազոտությունների վիճակը մխիթարական չէ: Հրապարակի վրա են բավականին գրականություն, սակայն դրանցում, որպես կանոն, բացակայում են գործնական նշանակության առաջարկություններ, որոնք կնպաստեին դատական իշխանության առկա վիճակի բարելավմանը: Այս առումով, արժանի է ընդգծել հեղինակի ջանքերը ուղղված ոչ միայն տեսական հարցադրումներին, այլև գործնական-կիրառական կողմերին համարժեք լուծումներ գտնելու ուղղությամբ: Այս կապակցությամբ քննարկվող հետազոտության նպատակն է դատական իշխանությանը վերաբերող տեսական հարցադրումներին զուգընթաց, մշակել գործող օրենսդրության և դատական պրակտիկայի կատարելագործմանն ուղղված համապատասխան առաջարկություններ, որոնք միտված կլինեն արդարադատության արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտության առարկան ներառում է դատական իշխանության կառուցվածքի, ապարատի և գործառնական լիազորությունների ճշգրտումը և բարելավումը, արդյունավետ արդարադատության իրականացման խնդրահարույց հարցերի բացահայտումը և դրանց համարժեք լուծումների առաջարկումը:

Գրախոսովող ատենախոսության գիտական նորույթը արտահայտվում է դատական իշխանության, որպես պետական իշխանության և քաղաքացիական հասարակության միջև «իրավական միջանցքի» էության բացահայտման մեջ:

Աշխատանքում համոզիչ փաստարկվում է այն թեզը, ըստ որի դատական իշխանությունն է ապահովում գրված օրենքների կենսարար ուժը, այդ թվում լրացնելով օրենսդրական բացերը և վերացնելով կոլեզիոն նորմերը: Բացի դրանից, հետազոտությունում հանգամանորեն վերլուծության են ենթարկվել դատական իշխանության՝ որպես հատուկ սոցիալ-իրավական ինստիտուտի էությունը, բնութագրական առանձնահատկությունները, ինչպես նաև պետական իշխանության համակարգում դատարանի դերն ու տեղը, նրա հավասարակշռող և զսպող գործառնությունները:

Գիտական նորույթի տարրեր են պարունակում նաև պաշտպանության ներկայացրած մի շարք դրույթներում, օրինակ՝ նշվում է, որ «դատական իշխանությունը պետության քաղաքական ռեժիմի խտացված արտահայտությունն և պետական իշխանության ինքնասահմանափակման միջոց է» (Ատենախոսություն, էջ 9):

Վերջում նշենք, որ գրախոսվող ախատանքն ունի տեսական և կիրառական նշանակություն ինչպես դատական իրավունքի զարգացման ոլորտում, այնպես էլ դատական իշխանության համակարգի մարմինների կատարելագործման ուղղությամբ:

Դրական գնահատելով կատարված աշխատանքը, այդուհանդերձ ունենք որոշակի դիտողություններ և նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին:

Առաջին, առաջին գլխի առաջին ենթագլխում անհրաժեշտ էր համակողմանի վերլուծության ենթարկել դատական պրակտիկայի դրական և խոցելի կողմերը առնվազն վերջին երեք տասնամյակների փորձը, որպեսզի հասկանալի լինի ներկայի խնդիրների էությունը, դրանց առաջացման պատճառների և դրանցից ազատվելու հիմնական ուղիների վերհանումը: Կուտակված փորձի վերլուծությունը հնարավորություն կընձեռի նաև ուրվագծելու զարգացման հեռանկարները:

Երկրորդ, անհրաժեշտ էր նաև կանգ առնել դատարանի «մաքրիչ», «զտիչ» դերակատարման վրա, քանզի դատարանը «մաքրում, զտում» է հասարակությունը ոչ միայն «անցանկալի անձանցից», այլև վերացնելով իրավական բացերը, դրանով

անադարտ է պահում իրավունքի և օրենսդրության համակարգը, զարգացնում է իրավունքը և հասարակական իրավագիտակցության մակարդակը:

Սակայն նշված դատողությունները և նկատառումները կրում են մասնակի բնույթ և չեն կարող որևէ կերպ ազդել աշխատանքի դրական արժանիքների վրա:

Հեղինակի հրատարակված աշխատանքներում լիարժեքորեն են արտացոլված ատենախոսության հիմնական դրույթները:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Վերոնշվածը հավաստում է, որ Լևոն Գազիկի Ալոյանի «Հայաստանի Հանրապետության դատական իշխանության զարգացման հեռանկարները դատաիրավական բարեփոխումների համատեքստում. տեսական-իրավական վերլուծություն» վերնագրով ԺԲ.00.01- «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ամբողջական և ավարտուն հետազոտություն է, լիովին բավարարում է նմանատիպ հետազոտություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր կողմից հայցվող՝ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱՆՈՍ,
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԴՈՑԵՆՏ՝

Ա.Լ.ԱՍԱՏՐՅԱՆ

Լ. Գ. Ալոյանի ատենախոսության պաշտոնական ընդդիմախոս, Երևանի պետական համալսարանի իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ա.Լ. Ասատրյանի ստորագրությունը հաստատում եմ:

Երևանի պետական համալսարանի
գիտական քարտուղար



Մ.Վ. Հովհաննիսյան

20.10.25թ.